# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՄՐՑԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ
# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

18 հոկտեմբերի 2022 թվականի թիվ 395-Ա

## ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԿՈՂՄԻՑ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄՐՑԱԿՑՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԻՐԱՎԱԽԱԽՏՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՎԱՐՈՒՅԹ ՀԱՐՈՒՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Մրցակցության պաշտպանության հանձնաժողովը (այսուհետ նաև՝ **Հանձնաժողով**) 2022 թվականի հոկտեմբերի 18-ի նիստում, քննարկելով Երևանի քաղաքապետարանի կողմից տնտեսական մրցակցության բնագավառում իրավախախտման վերաբերյալ վարույթ հարուցելու մասին հարցը,

### Պ Ա Ր Զ Ե Ց

Հանձնաժողովի մրցակցության գնահատման և վերահսկողության վարչության համակենտրոնացումների, պետական օժանդակության և պետական գնումների վերահսկողության բաժնի կողմից 2022 թվականի հոկտեմբերի 13-ին Հանձնաժողովի նախագահին է ներկայացվել թիվ ՄՊՀ-006340 զեկուցագիրը (այսուհետ՝ **Զեկուցագիր**), որում նշվել է, որ Հանձնաժողովի կողմից ուսումնասիրության առարկա են դարձել Երևանի քաղաքապետարանի կողմից 2021 և 2022 թվականների ընթացքում ավտոբուսների ձեռքբերման նպատակով կազմակերպված գնման ընթացակարգերը:

Վերոնշյալ գործընթացի շրջանակներում գնման ընթացակարգերի, ինչպես նաև վերջիններիս հրավերների տեխնիկական բնութագրերի ուսումնասիրության արդյունքում ի հայտ են եկել որոշ հանգամանքներ, որոնք կարող են վկայել տնտեսական մրցակցության բնագավառում հնարավոր իրավախախտման մասին:

Այսպես, Երևանի քաղաքապետարանի կողմից հայտարարված գնման ընթացակարգերի հրավերների տեխնիկական բնութագրերով սահմանվել են այնպիսի պահանջներ (ավտոբուսների շարժակազմի, կառուցվածքային և տեխնիկական այլ չափորոշիչների, շահագործման և տեխնիկական սպասարկման պայմանների և այլն), որոնց առկայությունը հանգեցրել է կամ կարող է հանգեցնել գնման ընթացակարգերի հնարավոր մասնակիցների համար անհավասար պայմանների ստեղծմանը և տնտեսական մրցակցության սահմանափակմանը:

Միևնույն ժամանակ, գնման ընթացակարգերի հրավերների տեխնիկական բնութագրերի, ինչպես նաև գնման ընթացակարգերի շրջանակներում ներկայացված պարզաբանումների ուսումնասիրության արդյունքում արձանագրվել է տեխնիկական բնութագրերով սահմանված չափորոշիչների միայն կոնկրետ մեկ սուբյեկտի կողմից արտադրվող փոխադրամիջոցների չափորոշիչներին համապատասխանելու հավանականությունը, ինչը կարող է վկայել այլ տնտեսավարող սուբյեկտների հետ համաձայնության ձեռքբերման հնարավորության մասին:

««Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին» 2021 թվականի մարտի 3-ի ՀՕ-92-Ն օրենքի (ուժի մեջ է մտել 2021 թվականի մայիսի 31-ին) 1-ին հոդվածով «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» օրենքը (այսուհետ նաև՝ **Օրենք**) շարադրվել է նոր խմբագրությամբ:

Մինչև 2021 թվականի մայիսի 31-ը գործող խմբագրությամբ Օրենքի $16^3$-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պետական մարմնի կամ դրա պաշտոնատար անձի գործողությունները կամ վարքագիծը կամ ակտերը, որոնք սահմանափակում, կանխում կամ արգելում են տնտեսական մրցակցությունը, արգելվում են:

Մինչև 2021 թվականի մայիսի 31-ը գործող խմբագրությամբ Օրենքի $16^3$-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ պետական մարմնի կամ դրա պաշտոնատար անձի՝ տնտեսական մրցակցությունը սահմանափակող, կանխող կամ արգելող գործողություն կամ վարքագիծ է համարվում՝ տնտեսվարող սուբյեկտի նկատմամբ խտրական պայմանների սահմանումը և (կամ) կիրառումը (...):

Մինչև 2021 թվականի մայիսի 31-ը գործող խմբագրությամբ Օրենքի $16^3$-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ կետի համաձայն՝ պետական մարմնի կամ դրա պաշտոնատար անձի՝ տնտեսական մրցակցությունը սահմանափակող, կանխող կամ արգելող գործողություն կամ վարքագիծ է համարվում՝ այլ պետական մարմինների կամ տնտեսվարող սուբյեկտների կամ դրանց պաշտոնատար անձանց հետ հակամրցակցային համաձայնությունները, այդ թվում՝ գործարքները, համաձայնությունները, ուղղակի կամ անուղղակի համաձայնեցված գործողությունները կամ վարքագիծը, որոնք ուղղակի կամ անուղղակի հանգեցնում են կամ կարող են հանգեցնել մրցակցության սահմանափակմանը, կանխմանը կամ արգելմանը(...):

Նույնաբովանդակ դրույթներ սահմանված են նաև 2021 թվականի մայիսի 31-ից գործող խմբագրությամբ Օրենքի կարգավորումներով:

Օրենքի 92-րդ հոդվածի հոդվածի 1-ին մասի համաձայն՝ տնտեսական մրցակցության բնագավառում իրավախախտման համար Հանձնաժողովն իրավասու է տնտեսավարող սուբյեկտներին, պետական մարմիններին և դրանց պաշտոնատար անձանց տալու նախազգուշացում կամ նշանակելու տուգանք:

Վերոնշյալ նորմերից բխում է, որ պետական մարմնի կողմից տնտեսավարող սուբյեկտի նկատմամբ խտրական պայմանների սահմանումը և (կամ) կիրառումը, օրենքով չնախատեսված դեպքերում ձեռնարկատիրական գործունեության սահմանափակումը կամ արգելումը, այլ տնտեսավարող սուբյեկտների հետ համաձայնության ձեռքբերումը հանդիսանում են Օրենքով նախատեսված իրավախախտումներ, որոնց իրականացման

դեպքում Հանձնաժողովը պետական մարմնի նկատմամբ կարող է կիրառել պատասխանատվության միջոց՝ նախազգուշացում:

Տվյալ դեպքում, Երևանի քաղաքապետարանի կողմից ավտոբուսների ձեռքբերման նպատակով հայտարարված գնման ընթացակարգերի հրավերների տեխնիկական բնութագրերում որոշակի չափորոշիչների սահմանումը առերևույթ պարունակում է տնտեսավարող սուբյեկտների նկատմամբ խտրական պայմանների սահմանման և (կամ) կիրառման, ինչպես նաև այլ տնտեսավարող սուբյեկտների հետ համաձայնության ձեռքբերման դրսևորմամբ պետական մարմնի կամ դրա պաշտոնատար անձի հակամրցակցային գործողության կամ վարքագծի հատկանիշներ:

Հաշվի առնելով վերոնշյալը՝ Հանձնաժողովն անհրաժեշտ է համարում Երևանի քաղաքապետարանի կողմից տնտեսական մրցակցության բնագավառում իրավախախտման վերաբերյալ հարուցել վարույթ:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով Օրենքի 76-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, 79-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, 83-րդ հոդվածի 1-ին մասով և 42-րդ հոդվածի 2-րդ մասով՝ Հանձնաժողովը

**Ո Ր Ո Շ Ե Ց**

1. Երևանի քաղաքապետարանի կողմից տնտեսական մրցակցության բնագավառում իրավախախտման վերաբերյալ հարուցել վարույթ:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

**ՆԱԽԱԳԱՀ** **Գ. ԳԵՎՈՐԳՅԱՆ**

2022 թ. հոկտեմբերի 18
Երևան